Հավելված
ՀՀ վարչապետի
2018 թվականի ապրիլի 21-ի
N 412-Լ որոշման

# ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

## *I. Վարչապետի բացակայության ժամանակ առաջին փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու կարգը*

1. Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 12-րդ մասի առաջին նախադասության՝ վարչապետի բացակայության ժամանակ վաչապետին փոխարինում է առաջին փոխվարչապետը:

2. Վարչապետի բացակայություն է վարչապետի հիվանդությամբ պայմանավորված ժամանակավոր անաշխատունակությունը կամ արձակուրդում գտնվելը:

3. Վարչապետի՝ արտասահմանյան գործուղման մեջ գտնվելու դեպքում առաջին փոխվարչապետի վրա վարչապետի որոշմամբ ըստ անհրաժեշտության ժամանակավորապես դրվում է վարչապետի պարտականությունների կատարումը:

4. Վարչապետի բացակայության դեպքում փոխվարչապետն իրականացնում է վարչապետի՝ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունները, բացառությամբ՝

1) Սահմանադրության 158-րդ հոդվածով սահմանված՝ հրաժարական ներկայացնելու,

2) Սահմանադրության 131-րդ հոդվածով սահմանված՝ Կառավարության կազմում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու,

3) Կառավարությանը՝ Կառավարության վստահության հարց դնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու,

4) Կառավարությանը և վարչապետի ենթակա մարմինների՝ վարչապետի կողմից նշանակվող պաշտոնատար անձանց պաշտոնից ազատելու,

5) փոխվարչապետների համակարգման ոլորտները փոփոխելու, նախարարության գործունեության ոլորտներն ընդլայնելու,

6) փոխնախարարների թիվը և նախարարությունների, ինչպես նաև պետական կառավարման համակարգի այլ մարմինների՝ վարչապետի կողմից հաստատվող կանոնադրություններում փոփոխություններ կատարելու, բացառությամբ վարչապետի հանձնարարությամբ սահմանված դեպքերի,

7) վարչապետի աշխատակազմի կանոնադրությունը և աշխատողների քանակը փոփոխելու, ինչպես նաև վարչապետի աշխատակազմի՝ վարչապետի կողմից նշանակվող պաշտոնատար անձանց պաշտոնից ազատելու կամ այլ պաշտոնի տեղափոխելու,

8) վարչապետի նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, բացառությամբ վարչապետի հանձնարարությամբ սահմանված դեպքերի,

9) Կառավարությանը մարզպետներին փոխարինելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու լիազորությունների:

*II. Վարչապետի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության դեպքում առաջին փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու կարգը*

5. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 12-րդ մասի 14-րդ մասով սահմանված դեպքում՝ Կառավարության որոշման հիման վրա վարչապետի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության դեպքում վարչապետին փոխարինում է առաջին փոխվարչապետը:

6. Վարչապետի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության դեպքում վարչապետին փոխարինող առաջին փոխվարչապետն իրականացնում է վարչապետի՝ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր լիազորությունները:

*III. Առաջին փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու անհնարինության դեպքում վարչապետին փոխարինելու կարգը*

7. Առաջին փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու անհնարինության դեպքում վարչապետին փոխարինում է այն փոխվարչապետը, որն ավելի երկար է պաշտոնավարել տվյալ պաշտոնում, իսկ եթե փոխվարչապետների պաշտոնավարման ժամկետները հավասար են՝ տարիքով ավագ փոխվարչապետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ